

## ՀԱՅԱՍՏԱՐԱԿԱՆ

### Խ Ա Լ Դ Բ Ա Ռ Ե Բ ՀԱՅԵՐԵՆԻ ՄԷԶ

Հայունակամբիք Մարտի թիվին և վեց.

(Դ) թա - րւ - հ, հայերէն վարել: Ահա մի բառ, ծագումով և հասկցողութեամբ մի խալդ - բուն հայկական բայ, որ մեր գառական մատենագրութեան մէջ այնչափ յաճախադէպ և գործածական է, որչափ խալդ արձանագրութեանց մէջ: Ինչպէս պիտի տեսնենք ստորեւ յառաջ բերուած նմուշներէն, խալդ թագաւորներն իրենց յաղթութեան մանրամատներն պատմելէ յետոյ, առնուած աւարեն կամ տուրքէն առաջ կը գնեն թա - րւ - ի բառը, այսինքն այսչափ ծի, եզ, ոչխար, մարդկէ կամ կամայք գերի վարեցի առ Բիայն երկիրն (Վան):

Parubi = վարեցի, սկզբնական պ բազայն տառագարձուած է վի, ինչպէս բազմութիւ ուրիշ բառերի մէջ: Առաջին անգամ Մօրթման<sup>(1)</sup> կարգաց բառը թէ՝ par - bi և թէ՝ թա - րւ - ի կրկնակ ձեւրով և

(1) A. D. Mordtmann. Zeitschrift der deutsch. Morgenl. Gesellschaft. 1872, էջ 540, տող 9. Նաև էջ 541, Ամերիկանութիւնը: Խնձ կը թուի որ խալդագէտներն նոնկանքապէս, և հայ բանակները մասնաւորպէս, ըստ արձանայն չեն գնաւատած Մօրթմանի այս արժէքաւոր գործը: Մօրթման իր ժամանակի հեղինակաւոր Արեւելադէկտնայագէտներն մէկն էր նա խորտէս ծանօթ էր հայ էր հայ էր գրականութեան և պատմական աւանդութեան, և ուրիշն նա փորձած է խալդ սեղացիք արձանագրութեաներն մէկնել հայ լեզուով և հայկ, աւանդութեամբ: Մօրթման պատման պիտի պատցուցանք որ Մօրթման ուղիւ և բանաւոր ճանապարհի վրայ էր, մասն թէ 1872ին և 1877ին, երբ նա հաստարակեց իր երկու մեծ փորձեր, զետ զանուած չէին երկնելուածն սեղացիք, զետ զանուած չէին երկնելուածն սեղացիք և Թօփաւայի պագրերն, ինչպէս ներ Քէլշինի և Թօփաւայի բանկագին կութանքներ: Ինչպէս ժանօթ է Խլկըթէն Ասորիմասն նոնիմասն այս սեղացիքներն մեծապէս զիւրացուցին խալդ լեզուի եղծանամբ: Մօրթմանի ժամանակ ժանօթ չէն խար ցեղան նունըն, և ուրիշն նա խալդ զիւրացու սասուած ծութիւնը վիսարբինած է նայկանին աւանդութեան Անտիմասն: Մեծապէս օգտուած եմ Մօրթմանի այդ արժէքաւոր աշխատաւոթիւններէ:

իրեկ համանիշ տուաւ ուրենում (յունարէն) և սարեն (գերմ. երթալ, համբորդել):

Աչյու<sup>(2)</sup> սկզբէն մինչեւ վերջ կարգաց ուղիւ և թարգմանեց և յափշտակեցի, տարայո (I carried off). Բէլք եւ Լէյրան - Հառուպան<sup>(3)</sup>, հաստատեցին Անյոի թարգմանութիւնը տալով գերմաներէն "einnnehmen", առնել, զրաւի: Ինչպէս վերս լիւեցի, բարսի բարը ամենէն շատ կրկնուած տուածիւններէն մէկն է, գրեթէ անվրէպ զործածուած ներդի թագաւորների զինուարական արշաւանքների մէջ: այդ պատճառաւ այդ բոլոր խալդագէտներն ընդունած են բառին գերոգրեալ մերձաւորն չանակութիւնը: Թրիգրիին<sup>(4)</sup> համեմատելէ յիտոյ Թօփաւայի երկեղուուան սիւնի Ասորական համանիշն՝ հետ (տող 17րոր) կը թարգմանէ կողոպանը և վարել (erbeuten und fortschleppen):

Իրեւե նմոյց բազմաթիւ նմանների կը վերցնեմ Սարգուր Գ. ի արձանագրութիւնը, գտնուած 1916ին Թաշ - Բէօրփի գլուզին մէջ, Զատուրը լին է կերպը եւ հրատարակուած նիկ. Մառէ<sup>(5)</sup> 1919ին: Կարճ ու շահեկան է այդ արձանագրութիւնը, եւ ուսումնակարգութիւնը է հնաև Աչյու<sup>(6)</sup>, Մշշանինդէ<sup>(7)</sup> և Ֆրիդրիխէ<sup>(8)</sup>:

Թաշ - Բէօրփու Սարգուրեան այդ արձանագրութիւնը հետեւեալն է.

#### Տող 1. Խալդիի ալսուիթիմի<sup>(9)</sup>

(թրգ.) Խալդի աստուծոյ մհծութեան չեռպէիւ(9)

(2) Sayce. Journal of the Royal Asiatic Society. 1882, no. XXXI. տող 18 (էջ 552), և ուրիշ շատ արժեք:

(3) W. Belck und C. F. Lehmann - (Haupt). Sitzungsberichte der Preussischen Akademie der Wissenschaften. 1900, էջ 632:

(4) Joh. Friedrich. Einführung . . . , էջ 40:

(5) N. Y. Marr. Zapiski Kavkasskogo Musei. Seryy B. I. 1919:

(6) Sayce. Journal of the Royal Asiatic Society. 1929, էջ 335 - 6:

(7) L. Meschaninov. Archiv für Orientforschung. հատու 7րոր (1931), էջ 160 - 163:

(8) Joh. Friedrich. Einführung . . . (1933), էջ 37:

(9) Հայունակ բազմագիմի և խորուկ քննութեան հաջապէտներ ցարց հերցան զանել պատճիմին, բառին տայզ իմասուր, ուրց Ղափանցեանի, քալանթարի և ներկեթելու հետ պէտք է թարգմանել մեր ժամանակի և Պատարագամա-

**Տող 2-3.** Սարգուրիք Արգիտօնիսինիօք ալիք  
(թրգ.) Սարգուրիք Արգիտօն որդին առէ

**Տող 4.** Իու ԿՈՒՐՈՒԼԻՄԻԼԱՄԷ(?) խառըի  
(թրգ.) ՄԵԽ ԵՐԿԻՐՆ ՌԵՒԹՄԵՄԵՔ ես խւեցի

**Տող 5.** Քիդուեաք իկուկանի ԿԱՎԱԿԱՆ  
(թրգ.) Վերագարձիս միւենոյն արշաւանքէն

**Տող 6.** խառըի ՈՒՐՈՒ Մակալյունի  
(թրգ.) խւեցի Քաղաք Մակալյունի

**Տող 7.** 'ուու ԿՈՒԵԳԻԱՆԻ  
(թրգ.) մարդիկ (և) կանայք

**Տող 8.** պարուիք կուր Բիայնսիլի  
(թրգ.) վարեցի առեկիրն Բիայնա:

Այս կարճ արձանագրութեամբ Սարգուր  
Գ. կը պատմէ թէ արշաւեց զէպի Ռւիսի-  
մէամէ երկիրը խւեց զայն (այսինքն տուրք  
առաւ), տպա վերագարձաւ Մակալյուն քա-  
ղաքով, ուրէկ թէ առաւ տուրք, և թէ  
մարդիկ և կանայք իրեք կերի վարեց (քչեց)  
դէպի Վան:

Այժմ կ'ուզիմ մեկնաբանել այս արձա-  
նագրութիւնը լրտ հին հայկական տեղա-  
գրութեան: Քերականական և համաձայնա-  
կան հարցին այնպիսի լրութեանք քննուած  
են պրօֆք. Քալանցուարէ, Մեջձանինովէ,  
Դափնիշեանէ և Ֆրիդրիխէ, որ քիչ բան  
կայ աւելցնելիք:

Սարգուր Գ.ը (մօտ 750-733 Ն. Ք.) ե-  
զած է ամենասուժեղ և շինարար աշխար-  
հականներէն մէկը: Սնկէ կան բաղմաթիւ  
արձանագրութիւններ, մանաւանդ անոր Տա-  
րեկիրը որ մի անգնահատելի գանձ է հա-  
յոց հին պատմութեան և աշխարհագրու-  
թեան համար:

Կը թուի որ, զոնէ ցարդ մեր ունեցած  
տեղեկութեանց սահմանին մէջ, Սարգուր  
Գ.ը այս արձանագրութեամբ կը զէ Ռւ-  
րարական կայուրութեան հիւսիս-արեւմտ-  
եան սահմանը՝ իր ժամանակ:

Արձանագրութիւնը գտնուեցաւ Զալտըր  
փաքը լիք արեւմտեան եղբն Թաշ-Քէօրփի  
գիւղը: Սարգուր չի գործածեր մէծ ուազմի  
սովորական բանաձեւք, որ քիչ տարբերու-  
թեամբ կ'սկսի այսպէս:

Խալիբնիմի ուշաքի մասինիկ Դիօսուրիքի:

առյօց մէջ անչափ յաճախ կրկնուած ամենակալ  
Տէր, կամ ամենապրամած և կամ նման գերազա-  
կան մի ածական:

Այս ամեն սեպագրութիւնք որ կ'սկսին այդ  
բաներով, կը նշանակեն մեծ կուի, մար-  
տակառքերով, այրուծիւնվ և արինուուչ  
բաղանութերով: Հնդկականական Սարգուր  
այսուեղ պարզապէս կ'ըսէ «խւեցի Ռւիփ-  
մէամէ երկիրը»: Հ. Յ. Սանտալէնին ար-  
դէն տարիներ առաջ խալի բայակի խառըի բայա-  
ձեւը իրաւամբ նոյնացուցած էր մեր խուել  
բային հետ, այսինքն ձնչէլ, տուրք առնել  
և այլն: Սարգուր կուուի հոսուք չի ըներ, այլ  
պարզապէս կը խուե, աւելի տուրք գան-  
ձեւու համար:

Ռւիփմէամէ քաղաքը կը նոյնացնեմ  
ներկայ Օկամ աւանին հետ, գուցէ ի սկզ-  
բան Օհան, մի վանք կամ մենաստան: Օ-  
համ աւանը կը գտնուի Զալտըր Գէօլի և  
Կարսի միջև, կէս ճանապարհին, Արտահա-  
նէն մօտ 20 վերսա հարաւարեկելք, ուրիէ  
ճանապարհը կը մեկնին նաև զէպի Օլթի:  
Աւանը զետեղուած է մի տափարտկ և բա-  
րեկը գաշամի հրախային ծայրը, որու վե-  
րեւ բարձրացող բլուրներէն կը բլիփի կուր  
գիւտի մէկ հիւղը:

Սարգուր չի յայտնիր թէ Վանին ինչ  
ճանապարհով եկաւ խուելու Ռւիփմէամէ-  
Օկամի իշխանն կամ թագաւորը: Միայն  
ակներեւ է որ Օկամէն մօտ 25 վերսա քա-  
ւելով զէպի հիւսիս-հիւսիս-արեւմտաք  
ընտիր ափին, այժմ Թաշ-Քէօրփի կոչուող  
գիւղին մէջ արձանագրուեց իր արշաւանքը:  
Այս կէտէն սկսեալ կը ծագի բնագրական  
աններգաշնակութեան մի կարեւոր խոդիր:  
Հնարաւո՞ր է 5 որր տողի բիգուեաք բառը  
թարգմանել յետաղաձիս: Գուցէ բանաւոր  
է բիր վանին մէջ որոնել մեր լիս, ես  
(գանալ) նախզիրը և կամ վիս-վիս բառը:  
Այդ պարագային հարցը կը ներկայանայ  
ենեւեալ կիրապով: Կամ այն է որ Սարգուր  
արձանագրութիւնը գրելու ժամանակ ար-  
դէն որոշած էր իր վերագարձին անցնիլ  
չէպի Մակալյուն քաղաքը զայն ևս խուե-  
լու համար, և կամ այն է Վան վերագառ-  
նալէ յետոյ գրել և Թաշ-Քէօրփիւմ աե-  
զաւորել տուեց սեպագրութիւնը:

Ենթագրութիւնս պայմանաւորուած է  
Մակալյուն քաղաքի տեղագրութեամբ, ան-  
վիճելիօրէն բաւական շատ հեռու Օկամէն,  
եւ բոլորպին դուրս Զալտըր Գէօլէն զէպի  
Վան գնալու սովորական ուղեգծերէն:

Սյուափ բնելէ յիսոյ, կը գժուարանամ այստեղ փորձելու Մակուսու քաղաքի նոյնացումը։ Այդ փորձը համոզիչ կերպով կատարելու համար պէտք է մէջլերի ուրիշ սեպագութիւններ և նախ և առաջ նոյնացնել Մակալուուի երկիրը, ինչ որ կը պատկանի տարբեր դլիսի և կարօտ է լայնածակ էջերի։

Դրա տողը մեզ կ'ընծայէ հայկական աւանդութեան մի ուրիշ ճշմարտութիւն։ Նոյն տողի առաջն բառը՝ 'առէ կը նոյնացընեմ մեր խաչեն բառին հետ։ Մեր թարգմանիչ հայրեր գրոց մէջ միշտ գործածած են ահովիլու բաշ զանձն իւր դեռ ի վերայ խաչին իւրոյն<sup>(10)</sup>։ Խաչն բառը այստեղ պէտք է լուգունել փոխարեւարար, մարդկանց խաչն, աւելի փառ կենդանիների հօսեր Մերիթեւի<sup>(11)</sup>, ինչպէս նախապէս Սէյս եւ Լ-Հաւոպատ, 'աշե բառին փերեւ կը դեմեկին Ասորական յոդնականացուցիչ մասնիկը MESH = Մէն, որով լիսպէս կը կազմուի հայաքական գոյականը՝ իսաչ = մարդիկ։

Առաջին անգամ Մօրթման<sup>(12)</sup> ուղղագէս կորդաց և թարգմանեց բառը, որպէս մարդիկ եւ կանաչ, թէկ նա չը յիշեր խաչն բառը։ Անէկ ի վեր խարդագէտներ ներմուծած են մի միայն տառապարձութեան աւելի նոր եղանակներ և քերականական կանոններ։

Բառին վերաբերեալ բոլոր տեղիքնին և քննական մանրամանութիւններն անսնէլ Ֆրիդրիխի<sup>(13)</sup>, Բառին խալդերէնէ առ հայրէն փոխանցման մի առանձնահակութիւնը կը թուլի վիճէ լ'աշեի սկզբանական անայնաւորի շեշտուած հանգամանքը։

Զափազանց հետաքրքրական մի ինչեր է թէ մեր խալդի նախահայրք ինչպէս կը հնէշին բառը։ Խ տառի գոյութիւնը գլխաւու տոր ասուուծոյ՝ խալդի անուան մէջ ո եւ է կասկած չի թողուը որ անոնք կինային հընչ չէլ իս ուրիշն եթէ Սարդուր Գ. գրած չէ խաչէ, պէտք է եկարակացնել որ հնչումը աւելի մօտ էր հագագային ա ձայնաւորի քան թէ իս տառի թաւ ձայնին։ Այսպիսի

(10) Հմմա. Ագաթ. հատ. 445, էջ 223.

(11) M. V. Tseretheli. Die Neuen Haldischen Inschriften . . . , (1928). Ա. տաղ 9. Բ. տաղ 34 հայլեւ։

(12) D. Mordtman. Zeitschrift . . . , ըստ վերնոյն, էջ 582.

(13) Joh. Friedrich. (Ա.) Archiv Orientalist. III. էջ 258, ձանօթ. 1. (Բ.) Einführung . . . , էջ 39, հ. 62։

մի հնարաւորութիւն իրբե երկրորդ հետեւանք, պէտք է ենթագրելու որ յետագայ դարերի ընթացքին, առնուազն մեր Ոսկեգորութիւնին խափայանացն և աղջը արդէն հագագայնացն և հղած էր պարզապէս խ (Խաչն), ժողովրդի բերնին մէջ<sup>(14)</sup>։

Հստ Սարգուրի այս արձանագրութեան կը թուիր որ կանաչ մասն չէին կազմեր մարդկային խաչնին, քանզի առանձնապէս յիշած է։

L'U'-ն-է-դի-ա-ու (ԼՈՒ-ու-է-տիանի) = կանայք։

Խալդիկը ոսկորաբար կանանց համար կը գործածէին կուտու (Փոքր Սովական բաւօն) բառը SAL որոշիչ նախզիրով, եւ ուրիշն SAL-իւս = ԱԱ. Առաւուու Ռազմական արձանագրութեանց մէջ միշտ գործածուած է վերջին բառու Այդ մասին առայժմ դրական մի բառ ըսկու վիճակի մէջ չեմ։ Գրչութեան ձեւն ու իմաստը քիննած են Սէյս<sup>(15)</sup> եւ Ֆրիդրիխի<sup>(16)</sup>։ Խալդագէտներ ցարդ շատ քիչ գրած են կայսրութեան<sup>(17)</sup> մարդաքաղաքը Տուշպայի (Տասպ) և կեղործանական նահանգը՝ Բիայնայի (Վան) մասին։ Արձանագրութեանց մէջ կան որոշ կրօնակամ կամ քաղաքական բանաձեռեր, որոնք բոլոր ազգերի պատմութեան մէջ նմանը չունեցող հաւատարկանի ժողովրդական աւանդութեանց մէջ։ Այդ կը վերաբերի Ռւրաբառի քաղաքական աշխարհագրութեան, զոր կարելի է ներկայացնել իրեւ մի ամբողջութիւն, և առանձին հատորով։

ԱՐԵԱԿ ԱԱ.ՔԲՐՈ.ՍՍԵԱՆ

(11) Հմմա. I. Markwart: Historische Data zur Chronologie der Vokalgesetze im Armenischen & Caucasica. (1931) p. 11. +

(15) Sayce. Journal . . . , ըստ վերնոյն, (1882), էջ 580.

(16) Joh. Friedrich. Einführung . . . , ըստ վերնոյն, (1933), էջ 39.

(17) Առարտուի համար պէտք է ընդունի «կայսրութիւն» բառը ինչպէս Գերմանացի իսակագէտներն բոլոր ալ զայն կ'անուաններ՝ Teutsch (կայսրութիւն), և Բայս գիտնականներ՝ Teutschland (կայսրութիւն), Որպէս տարածութիւն՝ մէծ էր քան Ասորեստան, որպէս աշխարհակալութիւն՝ առաջնորդ քիչ եւ կը մնայ երկրորդէն։ Եթէ Ասորեստանը պէտք է կայսերական թագավորութիւն, նոյն որպահումը պէտք է վերաբերի Ապահովանքին։ Այս կ'ըստմանը անին միծ էլանակութիւն։ (Սահօթ. Ա. Ա.)։